Արձանագրություն N 5

(նիստը կայացել է 2023թ. դեկտեմբերի 6-ին)

Նիստին մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ծնողական խորհրդի 12 անդամներից 11-ը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ա.Զաքարյան)

2. 2023-24 ուստարվա դեկտեմբերի պետական ավարտական քննությունների անցկացման կարգի ծանուցում:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

3. Դպրոցի սանիտարական վիճակի և ճաշարանի աշխատանքների մասին:

(զեկ.՝ Ա.Զաքարյան)

4. Դպրոցի ջեռուցման աշխատանքների մասին:

(զեկ.՝ Ս.Թարվերդյան)

5. Ամանորի միջոցառումների կազմակերպման մասին:

(զեկ.՝ Գ.Հակոբյան)

Օրակարգում՝

1. Դպրոցի ԾԽ նախագահ Ալիսա Զաքարյանը ներկայացրեց օրակարգը:

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝

2. 2023-24 ուստարվա դեկտեմբերին կայանալիք 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների անցկացման կարգի ծանուցում:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Լսեցին-2. Մայիսյանի դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի զեկույցը 2023-24 ուստարվա դեկտեմբերին կայանալիք պետական ավարտական քննությունների անցկացման կարգի վերաբերյալ: Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 78-Ն հրամանը՝ նշվեց, որ Մայիսյանի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտները ցանկություն չեն հայտնել մասնակցելու դեկտեմբերին անցկացվող պետական ավարտական քննություններին:

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել տնօրեն Ա.Սարուխանյանի ներկայացրած տեղեկատվությունը 12-րդ դասարանի քննությունների վերաբերյալ:

Օրակարգում՝

3. Դպրոցի սանիտարական վիճակի և ճաշարանի աշխատանքների մասին:

(զեկ.՝ Ա.Զաքարյան)

Լսեցին-3. դպրոցի ԾԽ նախագահ Ա.Զաքարյանի տեղեկատվությունը դպրոցի սանիտարական վիճակի և ճաշարանում տարվող աշխատանքների մասին: Նա նշեց, որ ինքը և ծնողական խորհրդի անդամները պարբերաբար լինում են դպրոցում, հետևում են դպրոցի սանիտարական վիճակին և սննդի պատրաստման ու տրամադրման աշխատանքներին: Դպրոցն ապահովված է մշտական տաք և սառը ջրով, սանիտարահիգիենիկ պարագաներով ու նյութերով: Առկա են որակյալ սնունդ տարամադրելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Լսելով և քննարկելով ԾԽ նախագահ Ա.Զաքարյանի ներկայացրած տեղեկատվությունը՝ ծնողական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հանձնարարել ԾԽ նախագահ Ա.Զաքարյանին և ԾԽ անդամներին շարունակել վերահսկողությունը՝ սահմանելով ամենամսյա ստուգայցեր:

Օրակարգում՝

4. Դպրոցի ջեռուցման աշխատանքների մասին:

(զեկ.՝ Ս.Թարվերդյան)

Լսեցին-4. դպրոցի տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալ Ս. Թարվերդյանի տեղեկատվությունը դպրոցի ջեռուցման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Նա նշեց, որ ջեռուցման աշխատանքները բարեհաջող կազմակերպելու համար կատարվել է մասնակի վերանորոգում, ժամանակին կազմվել են բոլոր փաստաթղթերը: Ջեռուցման աշխատանքները կազմակերպելու համար դպրոցի բյուջեից տրմադրվել են անհրաժեշտ գումարները: Նոյեմբերի 15–ից սկսվել է ջեռուցումը:

Ծնողական խորհուրդը, լսելով և քննարկելով Ս.Թարվերդյանի ներկայացրած տեղեկատվությունը,

ՈՐՈՇՈՒՄ Է

Հանձնարարել տնտեսվար Ս.Թարվերդյանին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները դպրոցի ջեռուցումն անխափան անցկացնելու համար:

Օրակարգում՝

5. Ամանորի միջոցառումների կազմակերպման մասին:

(զեկ.՝ Գ.Հակոբյան)

Լսեցին-5. Դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Գ.Հակոբյանի տեղեկատվությունը տարեմուտի միջոցառումների ծրագրերի վերաբերյալ: Նա նշեց, որ կիսամյակի ավարտին կկազմակերպվի ամանորյա միջոցառում՝ նախատեսված երեք տարիքային խմբերի համար՝

- նախակրթարանի սաների ամանորյա հանդես՝ 20.12.2023թ. ժամը 11-00-ին,
- 1-6-րդ դասարանցիներ՝ 22.12.2023թ. ժամը 10-00-ին,
- 7-12-րդ դասարաններ՝ 22.12.2023թ. ժամը 12-00-ին

Նա խնդրեց ծնողական խորհրդի անդամներին ակտիվ լինել, աջակցել դպրոցին կազմակերպական և աշակերտներին բեմական հագուստներով ապահովելու հարցերում:

Ծնողական խորհուրդը, լսելով և քննարկելով ԴԱԿ Ա.Սահակյանի տեղեկատվությունը,

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել նախակրթարանի և 1-12-րդ դասարանների ԾԽ անդամներին համագործակցել դասղեկ-դասվարների, խմբակավարների, գրադարանավարի, ԴԱԿ-ի հետ՝ միջոցառումը պատշաճ մակարդակով կազմակերպելու և այդ օրը երեխաների համար իսկապես տոն դարձնելու համար:

Դպրոցի ծնողական խորհրդի նախագահ՝ Ա.Զաքարյան

քարտուղար՝ Ա.Մարգարյան